

Ժողովրդական հասարակական գիտությունների քննադատությունը

(Շարունակություն)

3. Արևելք: Այլուր 45 մասնավոր դեպքերում արևելքը ընդհանուր առմամբ ընդհանրապես չի արդեն, թե մեր ժողովրդական հասարակական մեջ ինչ տեղ կը բռնե արևելքը. ուր նաև Եգիպտոսի մասնաճիւղին քանի մը տեղիքներ յառաջ բերած էինք: Այս հաստատման մեջ ո՛չ միայն այդ տեղիքները նկատողութեան կ'անենք, այլ նաև կը համարենք Կողբացոյցն բոլոր հաղորդածները նոյն նիւթի մասին, կարելի եղածին չափ կրկնութիւններէ խոյս տալով:

ա. «Եւ յեկեղեցիստեանս 46 գրեալ է՝ թէ «Ծագէ արեգակն եւ մտանէ արեգակն եւ ի տեղի իւր ձգի: Ինքն ծագեալ անդ՝ դնայ առ հարաւով եւ պատի առ հիւսիսեալ»: Զի ցուցցէ թէ ցերեկ առ հարաւակողմամբ գնայ ընդ արեւմուտս եւ գցայ առ հիւսիսեալ դառնայ յաւելս՝ ընդ լեռանց ստորտովք, որպէս ասն իմաստունսն» (218):

Շատ հետաքրքրական պատկեր է՝ որ Եգիպտոսի քանի մը գրչի հարուածով կը ստուերագծէ. կարծ խօսքով արեւու ստասպելական ծիրը կը նկարէ մեզի, որ հետեւեալն է. Արեւը ծագելէն վերջ՝ դէպ ի հարաւ կ'ընթանայ եւ մայրամուտքի ժամանակ արդէն արեւելքն արեւմուտքի կցող կիսաբոլոր ծիր մը կը ձգէ իր ետեւը երկնքի վրայ: Այդ կիսաբոլորին տակ կը տարածուի մեր երկիրը: Մայրամուտքէն յետոյ արեւն իր ընթացքը կը շարունակէ՝ հիւսիսային կողմը դանդաղ լեռներու ստորոտէն անցնելով: Մինչ արեւն այդ բարձրարեւած լեռներուն ետեւէն կ'ընթանայ՝ բնական է թէ չի կրնար երկիրը լուսաւորել, որ իրմէ անջատուած է այդ հիւսիսային լեռներով եւ անոնց ստուերին տակ մնացած (գիշեր): Այս լեռներուն ետեւէն ալ արեւը կիսաբոլոր ծիր մը կը ձգէ, եւ արշալոյսին՝ լեռներուն արեւելեան ծայրը կը հասնի ու իր առաջին ճառագայթները երկիր կ'ստարէ:

Անանիա Երեւակացոյ հետեւեալ հատուածը ո՛չ միայն կը լուսարանէ Եգիպտոսը

45 Հ. Ա. Գարամանեան, Արեւը հայ ժողովրդական հասարակական մեջ: Հանդ. Ամս., 1929, էջ 634—650, 752—759: 46 Ժողովուրդ, Ա., 5—6: Սուրբ Գրքի մէջ քիչ մը տարբեր է նոյն խօսքը. «Ծագէ արեգակն եւ մտանէ արեգակն եւ ի տեղի իւր ձգի: Ի ծագելն իւրում ելանէ ընդ հարաւ, եւ պատի ընդ հիւսիսիւ, պատելով պատի», որ յունարէնի համաձայն է:

դժած պատկերը, այլ եւ արեւու պատանայ կերպարանը կու տայ, ինչ որ կը յիշեցնէ Գողթան ծանօթ հին երգը: «Եւ արդ մի՛ զիս եպերէք, սիրելիք, դիտէ ծածկագէտն զի ո՛չ ստեմ. մինչդեռ էի առաւօտին յաղօթան ի վկայարանին Սրբոյն Եւզինեայ եւ միտքս յայս խորհուրդս ծիւղին (թէ արդեօք արեւը մար մտնելն յետոյ ի՛նչ աշխարհ կը լուսաւորէ), քուն էառ զիս, եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհէր յերկիր իջանել, եւ ես յառաջս ընթանայի, եւ ի գերկս ընդունէի դնա, եւ նա էր պատանի անմօրուս ոսկեղիտակ (°), եւ շրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկեղ լինէր օժեալ, եւ ինքն սպիտակս եւ փայլունս ունէր հանդերձս, եւ լոյս սաստիկ ելանէր ի բերանոյ նորա: Եւ ես ասացի՝ ցնա թէ ի վաղնջուց ցանկացեալ էի ի քէն լսել բան. արդ աղէ՛ պատմե՛ա եթէ յորժամ ծածկիս ի մէնջ, ո՞ւմ տաս լոյս: ... Եւ նա ասէ. ... Լերանց եւ անփայլց ձորոց եւ անձաւաց անկենդանեաց տամ լոյս» 47:

Յայտնի է որ Հայաստանի պէս լեռնային աշխարհ մը մեծապէս ազդած է բներեւութեան այս հայեացքին վրայ: Ազգային եւ օտար նման շատ մ'ըմբռնումներու կը հանդիպինք, որոնք արեւն ու անոր ընթացքը լեռներու հետ կը կապեն: Spiegelի 48 վկայութեան համաձայն հին Երանեանները արեւու ելլելն (Sonnenaufgang) եւ խոնարհելը (Sonnenuntergang) կը բացատրէին, լսելով թէ արեւն ու աստղները Տիրէ ըսուած լեռնագագաթին շուրջը կը դառնան: Այս հայեացքը հասկնալի կը դառնայ, երբ զայն Եգիպտոսի յիշուած պատկերին վրայէն ըմբռնենք. արեւն առաւօտ այդ լեռներուն ետեւէն կ'ելլէ՝ արեւելք, եւ իրիկունն անոնց ետեւ կը մտնէ՝ արեւմուտք: Մուտք եւ ելք բառերն արդէն կը նշանակեն երկնքի կամ հորիզոնի ա՛յն կողմը, ուր արեւը վերջալոյսին անյայտ կ'ըլլայ եւ կամ արշալոյսին կը ծագէ 49:

Աւելորդ չենք համարիր յիշելու հոս ժողովրդական լեզուի մէջ հետեւեալ արտահայտութիւնները:

47 Մնացորդ բանից, ի լոյս ամ Գերովքի Պատկանան, Ս. Պետրոսբուրգ 1877, էջ 39—40: «Ոսկեղիտակ» լատգոյն է թերեւս կարգով «ոսկեղիտակ», որով նախագատութիւնն աւելի իմաստ կ'առնէ: 48 Eranische Altertumskunde, I, էջ 188. 49 Ելք բառի գործածութիւնը տես Դատարար, է, 31: — Մուտք բառինը՝ Միտնոյք՝ ԺԷ, 12, 17, ԻԼ, 11. Ա. Մակարայեցոյ՝ ԺԲ, 27: Առանձինն օւշադրութեան արժանի է մայրա մ ու ու ք բառը, որուն մէջ տարբեր իմաստ մը ըլլալու է:

ղովրդական հանելուկ մը 50, որ թէեւ քիչ մը մոտ է, բայց յայտնի կերպով արեւու եւ լուսնի ընթացքին հետ կը կապէ սար մը.

«Սար ու լար,  
Էրգեան ու լար (?).  
Երկու կաթաւ (արեւ եւ լուսին),  
Գնալ ու դալի»:

Սրուանձտեանց 51 կը գրէ. «Վարագայ սարէն կ'երեւայ արշալոյսէն առաջ յարեւելս արեւուն ծագումն. ահագին լեռան մը տակէն կ'ըլլեն նախ 12 «ղավազներ», սեւ սեւ արարներ. եւ այդ լեռան վրայ լուսեղէն ճպոթներով ճառագայթի պէս կը զարնեն. լեռը կը ցածնայ ամեն սարերը իրենց գլուխը կը խոնարհեն. ... յանկարծ արեւու ոսկի զլուսն ու հրեղէն բըշամն կ'երեւայ»: Բարեկայիներն 52 ալ ունին արեւու լեռը, որ ցորեկուան ընթացքին արեւու դահին պատուանդանն է, իսկ գիշերուան ժամանակ լուսնի տիրապետութեան տակ կ'իջնայ: Աւստրոնեզեան 53 ցեղերու մէջ կարծիք կայ, թէ արեւն արշալոյսին ճեղքի մը մէջէն կ'ելլէ եւ կը լուսաւորէ երկիրը:

Բ. Սրուանձտեանցի յիշուած տեղիքը նաև ուրիշ հայեացքի մը հետ կապ ունի. արեւը լեռան մը տակէն կ'ելլէ: Եգիպտոսի ալ ունի այս տեսակի ըմբռնումներ. անիկայ ուսման հետ կը հաւատայ, որ արեւը «ուրեք ծածկի զցայգ» — տեղ մը կը ծածկուի գիշերուան ընթացքին: «Այլ բնա՛ւ իսկ» կը հերքեն աւելի խելամուռները, «ո՛չ ուրեք մտանէ արեգակն. եւ զի ո՛չ մտանէ՛ անտի յայտ է, զի ցայգ ի նորա լուսոյն ի լուսնի ամանն լոյս ծագէ. քանզի ինքն երթեալ հեռացեալ յայլ կողմանս երկնիցն գտանի»: Սակայն Եգիպտոսի ասով չի գոհանար. վասն զի իրեն համար՝ երկիրը վրանի ձեւով՝ տափարակ երկրին վրայ հաստատուած է 54: Ուստի եթէ

50 Ազգագր. Հանդ., IX, էջ 105: 51 Գրոց ու Բրոց, էջ 109: 52 Journal of the Society of Oriental Research, New York City, 1928, Volum XII, Nr. 1, էջ 3. 53 P. Wilh. Schmidt, Grundlinien etc., էջ 50. 54 Եգիպտոսի քանի մը գրչի տեղիքներէն այդ պատկերը. «Երկու երկնք են զոր Մովսէս պատմէ. զառաջինն՝ յորում ասէ. ի սկզբանէ արար Աստուած գերկինս եւ գերկիւր. եւ այն վերին երկնքն է զոր եթեր անմատոյց կոչեմք, որոյ որպիսութիւնն անդիտելի է մեզ: Եւ երկրորդ երկինս է հաստատութիւնս որ երեւի մեզ, յորում աստեղք են եւ սորա եւս անուն երկինք է. ըստ որում եւ Մովսէս ասէ: Թէ կոչեաց Աստուած զհաստատութիւնս երկին: Եւ ի մէջ այս երկուց երկնիցս է Զուրն, զոր բաժանեաց

գիշեր ասեն երկնքի վրայ ըլլար արեգակը՝ պիտի տեսնուէր. «Եւ թէ ասիցես՝ թէ նա յերկինս իցէ ցայգ, խաւարս որ լինի՝ ուստի՞ իցէ...: Ո՛չ սպաքէն յայտ է՝ թէ ուրեք ծածկի ցայգ. որպէս եւ ի մտիցն է տեսանելի. զի իբրեւ ի վերուստ ի խոնարհ իջանէ, եւ դարձեալ յիջանելն՝ իբրեւ ի ներքուստ ի վեր ելեալ համբառնայ (էջ 145—146):

Արեւն «ի վերուստ ի խոնարհ» իջած ժամանակ եւ «ի ներքուստ ի վեր» ելլելու ատեն, եթէ լեռնային երկիր մէջ է՝ լեռան մէջ մտած կամ լեռան մէջէն դուրս եկած կը համարուի. իսկ եթէ ծովային է երկիրը՝ լեռներուն տեղը կը բռնեն ծովերը: Այս երկու տեսակի ըմբռնումն ալ կը յիշատակէ Եգիպտոսի, որովհետեւ Հայաստան լեռնային եւ ծովային երկիր է միանգամայն: Ժողովուրդը կը հաւատայ՝ թէ արեւը երկրի տակէն կամ ծովու մէջէն արեւմուտքէն արեւելք կ'երթայ գիշերը: Բայց Եգիպտոսի համոզուած է, որ արեւը հիւսիսային լեռներու ետեւէն անցնելով՝ արեւելքէն դարձեալ երեւան կու գայ: Բնականաբար կը պնդէ, որ «դառնայ յարեւելս՝ ընդ լեռանց ստորտովք, որպէս ասն իմաստունք, եւ ո՛չ ընդ ծով, ... եւ ո՛չ ի ներքոյ երկրի. զի ի ներքոյ երկրի ոչինչ է, որպէս ասն Յոր 55՝ թէ Չգեաց գերկիրս ի վերայ ոչնչի» (218): Նոյնպէս ցոյց տալու համար թէ ո՛չ երկրի եւ ո՛չ ծովու մէջէն կրնայ երթալ արեւը՝ կը յարէ. «Եւ ընչի իմիք յոչնչի չէ հնար գնալ, եւ ո՛չ ցամաքական ընթացքն ընդ խոնարհութիւն ջուրը»: — «Այլ», կը պատասխանէ ժողովուրդն այս մեկնութեան տփոգ, «մեք իսկ աչօք տեսանեմք, զի ի ծովէ ելանէ»: — «Եւ զայն ո՛չ գիտեն», կը շարունակէ մեր Ջատագովը, «թէ վասն զի ցամաք ուրեք ի ծովէ անտի ո՛չ երեւի, յայն սակս թուի՝ թէ ի ծովէ անտի ելանիցէ: Որպէս յորժամ թէ յարեւմուտս ոք մօտ իցէ, եւ լեռան ինչ յարեւելից կողմանէ կայցէ, թուի նմա՝ թէ ի լեռնէ անտի ելանիցէ արեգակն: ... Նոյնպէս եւ նոյս՝ որ մօտ առ ծովուն կայցեն,

Աստուած՝ զձոր որ ծածկեալ էր գերկիր, զկեն թողով յերկիր՝ զոր կոչեաց ծով, եւ զկեն բարձրացոյց ի վեր քան զամենայն տարերս: Եւ արար զհաստատութիւնս իբրեւ զձեզուն ասն ի վերայ երկրի... Եւ զայս հաստատութիւնս Գաւթ իբրեւ զվրան ասէ, իբր թէ գմբէթաձեւ: Հարցմունքի պատասխանիք ի գիրս ծննդոց. Patrol. orient., T. XX, f. 1, էջ 26—27: 55 ԻԶ, 7:

Թուի՝ թէ ի ծովէ ելանիցէ. որ ո՛չ ի ծովէ անտի ելանէ, այլ ի ծագաց երկնից»։ Վերջապէս ուսմիկը չի տարճամոզուիր, պատճառաբանելով, որ առաւօտեան ցօղը ծովէն ելած արեւէն յառաջ կու գայ. «Այլ եւ ցօղ սաստիկ, ասեն, արկանէ յաշխարհին. ուստի յայտ է՝ թէ ի ծովէն ելանէ» (218—219)։ Անանիա Շիրակացի<sup>56</sup> սա խօսքը կը դնէ արեւու բերանը. «Կատարեմ զգիշերային ընթացս իմ ի ստորեւ երկրիս յարեւմտից յարեւելս»։

Արդէն ուրիշ առթիւ<sup>57</sup> ցոյց տուինք, թէ մեր հայերուն այս հին հայեացքները ո՛չ միայն հայ ժողովուրդին մէջ մինչեւ հիմայ դեռ կ'ապրին, այլ նաեւ կը գտնուին օտար ազգերու մէջ։ Շիրակցիները<sup>58</sup> կը համարին, որ արեւը մար մտնելէն յետոյ՝ ծովու մէջէն արեւելք կ'անցնի։ Սասունցիները<sup>59</sup> աւելի կը ճոխացնեն այս պատկերը. արեւը վերջալոյսին ծով մտնելէն յետոյ կը լողայ եւ առաւօտը ծագելու ժամանակ՝ երբ իր երեսը կը լուսայ, «Չուրի ցօղերով կը սրսկուին սարերը եւ դաշտերը. հաւքերը ամենքը վեր կը թռնեն այս ջրի սրսկումէն»։ Արեւը երկրի կամ ծովու մէջ մտնելով՝ սանդարամետ իջած կը համարուի։ Այս տեսակէտը սակայն ո՛չ Եգիպտոսի քով եւ ո՛չ ալ արդի ժողովրդական հաւատքին մէջ շեշտուած է։ Օտար գիցարանութիւններու մէջ արեւը սանդարամետի մէջէն կ'անցնի գիշերը շատ անգամ նաւով մը։ Հոմերոսի<sup>60</sup> կարծիքով՝ Աթենաս գիշերը երկարատեւ ընելու եւ արեւուն ծագելն ուշացնելու համար, Արշալոյսն ալիքներու վրայ կը կեցնէ, եւ անոր սրավար նժոյգներուն թոյլ չի՛ տար որ լծուին՝ մարդկան լոյս բերելու համար։ Բարեւական գիցարանութեան համաձայն՝ գիշերուն ընթացքին արեւը ստորերկրեայ սանդարամետի մէջէն կ'ընթանայ, ուր մտած կը համարուի սանդարամետի արեւմտեան դռնէն եւ ուսկից կ'ելլէ արեւելեան դռնէն։ Երբ այս տեղէն ալ վեր կը բարձրանայ օրուան աստղը, երկիրն արշալոյս կ'ունենայ. սրովհետեւ այդ դուռը երկրիս մէկ ծայրը կը գտնուի (արեւելք), ճիշդ արեւմտեան դրան

գիմաց, որ նոյնպէս երկրիս միւս ծագելն վրայ է։ Եգիպտական Մեոեւագրքին մէջ<sup>61</sup> կը կարգանք. «Ո՛վ Տուսմ-Ռա (արեւու աստուած), որ ջուրէն փառաւորութեամբ վեր կը բարձրանաս» եւն։ Եգիպտական ուրիշ տեսագծի մը համաձայն՝ արեւն իրիկուն Ակերու աստուծոյն բերնէն ներս կը մտնէ. Ակերու երկու իրարու կպած առիւծներու մարմնէ կը բազկանայ. առիւծներուն մէկ գլուխը արեւմուտք կը գտնուի, իսկ միւսն արեւելք։ Իրիկունն արեւմտեան գլխուն բերնէն կը մտնէ արեւը եւ առտու արեւելեան բերնէն լոյս աշխարհ կ'ելլէ։ Տարարի<sup>62</sup> կը գրէ. «Աստուած արեւուն եւ լուսնին համար ստեղծեց՝ արեւելք եւ արեւմուտք՝ հարիւր ութսունական աղբիւրներ, որոնք սեւ տիգմով լեցուած վայրէ մը կը բխեն։ Այդ աղբիւրներէն հարիւրութսունն արեւելք են, նոյնչափն ալ արեւմուտք։ Աղբիւրներու սկախառն ջուրն այնպէս կ'եռայ, որ կարծես թէ կաթնայի մը մէջ ըլլար։ Իւրաքանչիւր օր արեւը կարգաւ կ'ելլէ կը բարձրանայ ակի մը մէջէն՝ արեւելքի կողմը։ Եւ տարուան մէջ երկու անգամ կը ծագի նոյն ակի մէջէն։ Իսկ մար մտնելու ժամանակ նոյն բանը կ'ընէ արեւմտեան աղբիւրներուն մէջ մտնելով՝ եւ այն։ Յայտնի է, որ հոս եռացող սկախառն աղբիւրները սանդարամետի դռները կամ ծակերն են, որոնց մէջէն կը մտնէ ու կ'ելլէ արեւակը։

գ. Երկու տեղ մեր հեղինակն առհասարակ աստղներն ու արեւն իբր աչք կը ներկայացնէ։ «(Ստոյիկեանքն) Աստուած զմիտս սահմանեցին, իբրեւ թէ շունչ ամենայնի կցէ, տարերն երկնից եւ երկրի. մարմին նմա զամենայն ինչ որ է՝ եգիպտոս, եւ աչս՝ զուսաւորսն» (236)։ «(Ստոյիկեանք) զմիտս աստուած համարեցան<sup>63</sup>. իբրեւ զշունչ երկ-

<sup>61</sup> Dr. Theodor Hoepfner, Der Tierkult der alten Ägypter (Denkschr. d. kais. Akad. d. Wiss. in Wien. Phil.-hist. Klasse, 57. Bd., 2. Abhandl.). Wien 1914, էջ 41. Archiv Orientalni, Praha 1931 (Vol. III), Nr. 1, էջ 140.  
<sup>62</sup> Tabari, Chronique, Traduite par M. H. Zottenberg, Paris 1867, tome I, էջ 27, 29.  
<sup>63</sup> Ստոյիկեանքը կը վարդապետէին՝ որ Նախաւորն Աստուած՝ փոփոխուելով՝ տիեզերքի կը յեղաշրջուի։ Տիեզերքի վրայ տեսնուած ասանձական զոյակներն այդ նախնական յանսահման եղանակաւորուած արտացոլացումներն են։ Աստուածութիւնը միանգամայն կը մտածուի իբր Միտք (νοῦς, νοῦς) կամ Նախախնամութիւն (προνοια) կամ Ճակատագիր (επιμαρτυρη), վերջապէս բանաւոր էակ, այնպէս որ այդ աստուածային Մտքին արտայայտութիւններն կը նկատուին ո՛չ միայն տիեզերքի օրէնք-

նից եւ երկրի եւ ամենայնի որ ի նոսա, եւ աչս զուսաւորսն» (261)։ Ստոյիկեան այս հայեացքը մենք ո՛չ միայն օտարներու քով գտանք, այլ եւ նշմարեցինք զայն մեր ազգային հաւատալիքներուն մէջ<sup>64</sup>։

Մեր արեգակն բառը պէտք է «արեւու աչք» հասկնանք։ Բառն իր «ակն» վանկով երկու բացատրութիւններու կարելիութիւն կու տայ. «ակն» մէջ մը կրնայ իբր պատուական քար հասկցուիլ, որով կը ստանք «արեւ-գոհար» իմաստը, ինչ որ ընդհանուր գիցարանութեան մէջ հազուադէպ երեւոյթ մը չէ։ Դարձեալ՝ «արեգակն» կրնանք ստուգարանել իբր «արեւ-աչք» եւ կ'ունենանք շատ սովորական գիցարանական լոճիւնք մը։ Արդ, այս երկու հնարաւորութիւններէն ո՞րը ճիշդ է։ Հոս՝ հայ լեզուն վճիռը կու տայ։ «Արեգակն» բառի յոգնակին «արեգակունք» կ'ըլլայ։ Յայտնի է, որ այդ «...ակունք» դործ չունի «ակունք»ի հետ։ Վերջինս ոսկեգարու մատենագրութեան մէջ միայն ու միայն «գոհարներ» կը նշանակէ։ Ուստի՝ եթէ «արեգակն» հաւասար ըլլար «արեւ-գոհար» իմաստին, մեր ոսկեգարու հեղինակները մեզի պիտի աւանդէին «արեգակունք» ձեւը, որ գոյութիւն չունի<sup>65</sup>։ Եգիպտոսի մէկ անգամ կո գործածէ այդ բառն. «Ընդէ՞ր ո՛չ բազում աշխարհք իցեն եւ ոչ բազում երկինք եւ ոչ բազում արեգակունք եւ ոչ բազում երկիրք» (260)։ Այժմ հարց կը ծագի՝ թէ «արեւու աչք» ըսելով ի՞նչ պիտի հասկնանք։ Հոս այս մասին չենք ուզեր ծանրանալ. միայն անցողակի կու տանք հետեւեալ բացատրութիւնը, զոր ապագային կը յուսանք թէ աւելի մանրամասն ներկայացնելու առիթը կ'ունենանք։

նրք, այլ եւ յատկապէս մարդու միտքն աստուածութեան մէկ թիւմը կը համարուի. Wetzer u. Weltes, Kirchenlexikon, Freiburg i. Breisgau, 1899, XI. Bd., էջ 831։

<sup>64</sup> «Փիլիսոփոսք իբրեւ գաչս երկնից ասն զանշարժ աստեղան հաստատեալ յերկինս», Եղիշէ, անդ, էջ 32։  
<sup>65</sup> Հոս պատշաճ կը համարենք Մեծ. Հ. Գ. Սարգսեանի ուշագրութիւնը թիւրիմացութեան մը վրայ հրաւիրել։ Ի ազմ ա վ է պ ի մէջ, 1929, էջ 382, գրած է. «Ակն գրարարի մէջ, պատուական քար նշանակելու համար՝ ինչպէս Մեծ. Հ. Յակ. Վրդ. Տաշեան ալ կ'ըսէ, միշտ ակամբ կ'ըլլայ յոգնականի մէջ»։ Նոյն տեղ կը կրկնէ այս խօսքը։ Կ'ակնարկուի Հակոբ. Անու., 1929, էջ 635, ուր եւ այլուր իբր թէ Հ. Յ. Տաշեան այդպիսի արտայայտութիւն մը բրած ըլլայ։ Մեծ. Հ. Գ. Սարգսեանն ուշագրի կ'ուզենք ընել, որ յօդուածն ստորագրողին գիտողութիւնն է այդ, որ հոս աւելի մանրամասն նկատողութեան կ'աւանդուի։

Արդ ակնարկուած «աչք»ը համաշխարհային գիցարանութեան վկայութեամբ՝ կը վերաբերի լուսոյ գերագոյն աստուածին, որ հոս «արեւ, արեւ» բառին տակ ծածկուած է։ Այս վերջին երկու բառերուն հետ նոյն է «արփի», որ թէեւ դասական մատենագրութեամբ մեզի չէ հասած, բայց իմաստը՝ զոր կը յայտնէ, գիցարանական ժամանակաշրջանին կը հասցնէ զմեզ։ Բազմաթիւ տեղիքներ՝ համոզած են զիս, որ այդ «արփի» բառը կը նշանակէ «յաւիտենական, անստեղծ, անստուեր լոյս», գաղափար մը, որ սովորական է հնդկեւրոպական՝ ու մասնաւորապէս արեւելեան արիական գիցարանութիւններուն<sup>66</sup>։ Արդ, յաւիտենական անստուեր լոյսը կը նոյնանայ գերագոյն աստուածին հետ. ասոր աչքն է արեգակը։ Ուստի եւ «արեգակն» ուրիշ բան ըսել չէ, եթէ ոչ «արփի-ակն», այսինքն լոյսի գերագոյն աստուածութեան աչքը։ Լեզուաբանութիւնն ալ կը հիմնաւորէ մեր այս մեկնութիւնը, որովհետեւ «արեւ, արեւ» նոյն է «արփի» բառին հետ<sup>67</sup>։ «Արեգակն» եւ «արփի» պերճախօս վկաներն են հայ հին լուսապաշտութեան, որմէ բազմաթիւ մնացորդներ հասած են մեզի։

դ. Արեգակն իբր գերագոյն աստուածութեան աչք՝ կը շրջի հաստատութեան վրայ ու կ'անցնի սանդարամետի մէջէն։ Այսպէս ամբողջ տիեզերքի վրայ յածելով անցած միջոցին՝ բնական է թէ արփիի աչքին տակ կ'իջնայ ամէն ինչ։ Ասոր հետեւանքով կը նկատուի արդարութիւն եւ իրաւունք վճռող, այսինքն՝ երկնային դատաւոր։ Հայեացքիս մասին Եգիպտոսի գեղեցիկ օրինակ մը կ'ընձեռէ պարսիկ գիցարանութեանէն. «Արճմին, ասեն, զՈրմիդդ ի ճաչ կոչեաց. եւ եկեալ Որմիդդ՝ չկամեցաւ զճաչն ուտել, եթէ ոչ նախ որդիքն նոցա կուտիցեն։ Եւ ի խեթկել որդւոյն Արճմինի որդիքն Որմիդդի, ի խնդիր եղեն դատաւորի եւ ոչ զտին. ասպա առեալ արարին զարեգակն, զի լիցի ևնցա դատաւոր» (162)։

Ե. Ընդհանուր գիցարանութեան մէջ արեւն ու լուսինը ո՛չ միայն աչք կը նկատ-

<sup>66</sup> A. Christensen, Études sur le Zoroastrisme de la Perse antique. Kobenhavn 1928, էջ 55. Fr. Windischmann, Zoroastrische Studien. Berlin 1863, էջ 63.  
<sup>67</sup> Հմմտ. Ահառեան, Արմատական բառարան, «Արփի»։

<sup>56</sup> Մնացորդք Բանից, էջ 61։  
<sup>57</sup> Հակոբ. Անու., 1929, էջ 645, 649. Հմմտ. նաեւ Ազգագր. Հանդ. X, էջ 198, XVII, էջ 94։  
<sup>58</sup> Իմիւնեան ազգագր. ժող., Ա, էջ 198։  
<sup>59</sup> Գրոց ու Բրոց, էջ 107 եւ 109։  
<sup>60</sup> Ողբական, Իգ։

տուրն, այլ եւ ուրիշ առարկաներու հետ նոյն կը համարուին: Այս նոյնացումը յառաջ կու գայ՝ ինդերական առարկային ու արեւուն եւ այլն մէջ տեսնուած նմանութենէ մը, որ շատ անգամ բնամարդու պարզ աչքերով նշմարուած է: Այսպէս՝ արեւը ո՛չ միայն էակ մը կը նկատուի, այլ նաեւ — ինչպէս տեսանք — սատուածութեան մը աչքը. դարձեալ՝ վահան, զնդակ, անիւ եւն<sup>68</sup>: Այս վերջին հայեացքը նաեւ Եղիշիկի ծանօթ է. «Ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան... արեգակն մի է եւ բազում, զի մի անիւ է եւ բազում ճառագայթք» (234): Վահան հանելուկ մը<sup>69</sup> հետեւեալը կ'ըսէ արեւու մասին. «Եօթը (ճիւղեր) կը քաշեն միանիւ կառք մը. երեք միջնանիւներ ունի այդ անանց եւ անդադրուն անիւը, որով կը կայանան ամբողջ էակները»: Հանելուկին միանիւ կառքն արեւն է. զայն կը քաշեն ճառագայթները, որոնք եօթը կը համարուին: Երեք միջնանիւները կը համապատասխանեն ատուան, միջօրէին եւ իրիկունս:

Գ. Ս. Նեղոսի խրատներու թարգմանութեան մէջ՝ Եղիշիկ ունի սա հատուածը<sup>70</sup>. «Քաղցր է մեղր, բայց արտաւրց մարմնոյ փրաս աննէ. օգտակար է խրատ եւ յանդիմանութիւն, բայց որ զդէմս յարեւմուտս է հաստատեալ՝ նմա անօգուտ է» (359): Արեւմուտքը արեւու մահուան վայրն է, ուր կը դանուի սանդարմետի դուռը: Լոյսն արեւելքէն կը ծագի, խաւարի խորհրդանիշն արեւմուտքն է. ուստի մահ եւ խաւար արեւմուտքի հետ կապուած են, իսկ կեանք ու լոյս՝ արեւելքի հետ: Մահուան ու խաւարի չար ոգին կամ սատուածութիւնը — սատանան, արեւմուտք կը բնակի. իսկ կեանքի եւ լոյսի բարի ոգին՝ արեւելք: Արդ երբ մէկը խրատ մը լսելէն յետոյ «զգէմս յարեւմուտս» կը հաստատէ՝ սիրան ու հոգին սատանային կ'ուղղէ ու անոր արամազութեան կ'ենթարկէ, բնականաբար «նմա անօգուտ

է» խրատը: Շատ ընտիր օրինակ մըն է՝ Ն. Շնորհաւույ դրած պայմանն՝ Արեւորդիներու դարձին համար<sup>71</sup>. «Եւ յորժամ զայս (զայլ ի ճշմարիտ սատուածութիւն քրիստոնէութեան) յանձն առնուն (Արեւորդիքն) եւ ասեն եթէ կամաւ եւ յօժարութեամբ սրտից ի բաց կամք ի սատանայական խաւարէութեանց հարցն մերոց... յայնժամ դարձեալ երիցս անգամ հարցէք ցնոսա, որպէս ընդ երեխայն ի ժամ մկրտութեանն, եթէ հրատարէ՞ք ի սատանայէ եւ յամենայն խորհրդոց եւ ի բանից եւ ի դործոց նորա: Եւ իրբեւ յանձն առնուն եւ ասեն թէ հրատարեմք, ապա յարեւմուտս դարձուցէ՛ք զդէմս երեսաց նոցա եւ ասացէ՛ք, թէ թքէ՛ք յերեսն սատանայի երիցս անգամ, եւ անարդեցէ՛ք զնա որպէս զպիղծ եւ զսուտ եւ զանիրաւ»: Վերի խօսքը կ'ակնարկէ մկրտութեան ժամանակ տեղի ունեցած ծիսակատարութեան, զոր Մաշտոցը<sup>72</sup> հետեւեալ կերպով կը բանաձեւէ. «Ապա հրամայէ քահանայն երեւոյսին կամ կնքահօրն դատնալ զէս յարեւմուտս, եւ հարցանէ զերեսայն յանուանէ՛ անելով. (Այս անուն) հրատարի՞ս ի սատանայէ: — Հրատարիմ: ... Եւ ապա քահանայն հրամայէ երեսային կամ կնքահօրն դատնալ զէս յարեւելս, եւ հարցանէ զերեսայն յանուանէ՛ անելով... Հաւատա՞ս ի Աստուած» են: Միւրիւր Ապարանեցի<sup>73</sup> մեր Արեւորդիներուն մասին կը գրէ. «Ընդ որ (կողմն) երթայ արեգակն, ընդ այնմ երկրպաղեն եւ սրտունն զժառն բարտի եւ զշուշան ծագիկ եւ զբամբակին եւ զայլն, որ զգէմս իւրեանց շրջեցուցանեն ընդդէմ արեգակն»: Շիրակացի<sup>74</sup> մայրերը կը խրատեն իրենց որդիները. «Երեսդ զէս աղօթքան արած, կամ արեգակի զէմ մի՛ ցեթի (միղեր), որ չպատժուես»: Հոմերոսի զուշակներն արեւելքէն յաճող թռչունին երեւալը բարեզուշակ կը համարէին, իսկ արեւմուտք թեւածողը՝ չարազուշակ:

(Շարունակելի:) Հ. ԱՌԱՆԱՍ ԳԱՐԱՄԱՆԵՆԵԱՆ



<sup>71</sup> Նամականի, Վենետիկ 1838, էջ 242:  
<sup>72</sup> Մաշտոց Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ Վիճենա 1905, էջ 7:  
<sup>73</sup> Ալիշան, Հին Հատար կամ Հեթանոսական կրօնը Հայոց, Վենետիկ 1895, էջ 92-93:  
<sup>74</sup> Իմին, ազգագր. ժող., Ա, էջ 151:

<sup>68</sup> P. Ehrenreich, Allgemeine Mythologie und ihre ethnologischen Grundlagen, Leipzig 1910, էջ 162: Ամանիա Շիրակացի, անդ, էջ 53: Մամանայ, էջ 126: Հանդ. Ամս. 1929, էջ 436:  
<sup>69</sup> Haug, Vedische Rätselfragen und Rätselfprüche, Sitzungsber. d. k. Bayer. Akad. d. Wiss. zu München. Phil.-hist. Klasse, Bd. II (1875), Heft IV, էջ 463.  
<sup>70</sup> Մեզի համար կարեւորութիւն չունի թէ արեւը իրապէս Եղիշիկ է խրատներուն թարգմանք եւ թէ անոնք Ս. Նեղոսի կը վերաբերին: Վարք Հարանցի մէջ ալ կայ մի եւ նոյն հասուածք, Վենետիկ 1855, Բ. հատոր, էջ 720:

ԵՂԵՔՍԱՆՊԻ ՄԱՆԹԱՆԵՆԵՑ  
 ՄԵՃ ՎԵՃԵՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԺԸ

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ:

(Շարունակելի)

Ե.

Իմ ծանօթութիւնը մեր մեծ վաճառականի հետ՝ տեղի է ունեցած հետեւեալ պարագաներում, 1894ին: Մանթաշեանց՝ որ «Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութեան»<sup>1</sup> մի խոշոր զուժար նուիրելով

<sup>1</sup> Ռուսահայոց այս ամենամեծ բարեգործական հաստատութիւնը հիմնուել է 1871ին նախ միայն թիֆլիս քաղաքի մէջ զործելու համար: Նա այնքան ժողովրդականութիւն էր գտել, որ ուստական կառավարութեան թողալու թեւակ 1882ին նրա զործունէութիւնը տարածուեց բովանդակ Կովկասի վրայ: Ըստ այնմ էլ «Թիֆլիսի Հայոց բարեգործ. ընկերութիւնը» սկսեց կոչուել «Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւն» (Армянское Благотворительное общество на Кавказе) եւ զործեց շատ աւելի մեծ եւ բազմակողմանի ծրագրով: Բոլոր կովկասահայերը անանց կուսակցական եւ դաւանական խորութիւններով, խմբուած էին այդ ընկերութեան շուրջը: Մասաւորական ոյժերն իրենց անձնական մասնակցութեամբ, իսկ առեւտրականները եւ զբամաշէրները իրենց խոշոր նուիրատուութիւններով մեծապէս օտարած են նրա բարգաւաճման: Երբ 1911ին թիֆլիսում օժնեկիներ նրա 30ամեայ յարեւանք, ընկերութիւնը հետեւեալ արդասաւոր պատկերն էր ներկայացնում.

ա. Նա ունէր 46 ճիւղ Կովկասի զանազան հայրենակ վայրերում:  
 բ. Պահուէր էր իր սեպհական շինութեան մէջ Որբանոց, չբաւոր հայ որբուհիներ պատսպարելու յատկացում: Այդ շէնքը կտակով նուիրել էր թիֆլիսցի մի հայ առեւտրական, Խուրադեան, որի անունով էլ Որբանոցը կոչուած էր:  
 գ. Յարակից՝ նոյնպէս սեպհական շինութեան մէջ զեւեղուած էր իր զբամաշէրներ, մեծ դահլիճը եւ իր ճոխ հայկական առարկան էր: Մասնաւորապէս թեւակ զորդուրանքի առարկան էր: Մասնաւորապէս կից կար նաեւ ընդարձակ դահլիճ — ընթերցարան:  
 դ. Պահուէր էր «ճրի մաշարան», մասնաւորապէս այն օտարերկրացի զարոցական աշակերտների համար, որոնք սովորում էին թիֆլիսի ազգային, քաղաքային կամ պետական դպրոցներում եւ կարօտութեան մէջ էին գտնուում:  
 ե. Ունէր «Հրատարակչական հիմնադրամ» հայերէն արժէքաւոր աշխատութիւններ հրատարակելու համար: Այս հիմնադրամը նուիրել էր մի այլ բարեգործ առեւտրական, Աւետիս Պողոսեան անունով:  
 զ. Հիմնել էր «Գրական Հիմնադրամ յանուն Արդիւն — Նազարեանցի», որտեղից նպաստներ էին արւում կարօտ հայ գրական աշխատողներին:  
 է. Օգնում էր հայրենիք վերադառնալ ուզող տաճկահայ զաղթականներին: (Մանթաշեանցի շուրջնաւոր շատ անգամ ձրի փոխադրում էին այդ զաղթականներին Սև Մովսիկ զանազան նաւահանգիստները եւ մինչև Եգիպտոս):  
 ը. Նպաստում էր հայ գիւղական կարօտ զարոցների: Չանազան բարեխրատ անհատներ որդեկրել էին մէկ կամ աւելի սոսկալի զարոցներ եւ հոգում էին նրանց ամբողջ ծախքը, Բարեգործական ընկեր-

«բարերար»ի տիտղոսն էր ընդունել եւ ընտրութիւնների ժամանակ թիֆլիսի Կենդրոնական Սորհրդի փոխ-նախագահի պաշտօնին էր կոչուել, 1894ին Բաթում գալու ժամանակ կամեցել էր մօտից ծանօթանալ բարեգործականի տեղական ճիւղի գործունէութեան: Այդ միջոցին Բաթումի ճիւղի վարչութեան մէջ էս նախագահ էի, իսկ Խարազեանց՝ Մանթաշեանցի մօրեղբորորդին եւ Ընդհ. Կառավարիչը՝ փոխ-նախագահ: Խարազեանց ինձ յայտնեց Մանթաշեանցի փափազն եւ էս մանրամասն զեկուցում տուի, որից նա այնչափ դո՛հ էր մնացել, որ ինձ խնդրեց, որ հետեւեալ օրը իր գրասենեակին երթամ նրա հետ անձնակախապէս աւելի մօտից ծանօթանալու համար: Նա չէր ծածկել իր զարմանքն, որ դեռ երիտասարդ լինելով հանդերձ, վարչութեան նախագահ էի ընտրուած<sup>2</sup>, երբ վարչութեան միւս բոլոր ան-

րութեան միջոցով, որ միեւնոյն ժամանակ հսկում էր այդ զարոցների ուսումնական եւ անտեսական մասերի վրայ: Առանձնապէս պէտք է յիշատակեմ երկու գլխաւոր բարերարներին. Տիգրան ԱՓրիկեան, ընկի Երեւանցի որ թիֆլիսում զործող մի բարեխրատ հասրուտ վաճառական էր, եւ Գասպար Տէր Մարգարեան, Չանդեղբուրջի նոյնպէս բարեխրատ մի մարդ, որ Բաթում էր գնացել իրբեւ նախահօր փորոց պարզ բանքը եւ այնտեղ յաճող էր ու հարստացել:

բ. Չանազան դաւանական բարեգործում եւ զիւղերում բացել էր ու պահպանում էր ընթերցարաններ ու դիպարաններ:

ժ. Ժողովրդական աղէտների ժամանակ, ինչպէս՝ տարափոխիկ հիւանդութիւններ, սով, հրդեհ եւ այլն, կազմակերպում էր լայն օժանդակութիւն աղէտակիներին: Եւ վերջապէս՝

ժա. Անընդհատ օգնում էր հայ կարօտակներին, թէ հիւանդ եւ թէ չբաւոր վիճակի մէջ գտնուողներին, կամ միանուազ նպատակով եւ կամ պարբերական ձեւով, հանդամանքներին նայելով:

Այսպիսի լայն եւ բազմաբղիւն գործունէութիւն է ունեցած այս մեծ հաստատութիւնն, որ զբարխտաբար պատերազմից յետոյ Ռուսաստանում տեղի ունեցող անակնկալ խոշոր քաղաքական փոփոխութիւնների հետեւանքով զրկուեց իր բոլոր միջոցներից եւ հարկադրուեց զաղբերջին իր գոյութիւնը...

Նրա հիմնադիրն է եղած՝ թիֆլիսցի մի բիւրի, Բագրատ Նաւասարդեան: Բայց նրա զարգացման գլխաւոր հեղինակն է եղած նրա կենդրոնական խորհրդի երկարամեայ նախագահը, փաստաբան Սամսոն Յարութիւնեան, որ մի եռանդուն հասարակական գործիչ էր: Ես եւս երկար տարիներ նոյն ընկերութեան Բաթումի ճիւղի նախագահութեան պաշտօնը վարելուց յետոյ, երբ թիֆլիս տեղափոխուեցայ, ինձ վարեցին Կենդրոնական Սորհրդի Անդամ-Գանձապահ: Այս պաշտօնն եւս երկար տարիներ կատարեցի եւ հրատարակեցայ միայն երբ հանդամանքների բերմամբ բնակութիւնս փոխադրեցի Բաթում:

<sup>2</sup> Այս դիւրք էս պարտական էի մեծ հրապարակալի Գրիգոր Արծրունուն, որ երբ լսել էր թէ Բաթումում Հ. Բար. ընկերութեան ճիւղ է բացում «Մշակի» մէջ ջերմ կերպով յանձնարարել էր իմ ընտրութիւնը՝ իրբեւ «վերին աստիճանի յաջող», ինչպէս նա գրել էր: «Մշակի» թղթակիցն եւ ապա մշտական աշխատակիցն էի 1882էց սկսած, երբ դեռ զրեթէ պատանեկական հասակում իմ առաջին գրա-